



ИЧЦПКСЦЧСЬ

БРІДЖІ



**Հ. Մ. Ը. Մ.ի
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**

ՄԱՏԵՆԱՅԱՐ ԹԻՒ 2

**ՍԿԱՈՒՏԱԿԱՆ
ԵՐԳԱՐԱՆ**

**ՊԵՇՐՈՒԹ — ԼԻԲԱՆԱՆ
1987**

Սոյն Հատորը կը Հրատարակուի

ՄԵԿԵՆԱՍՈՒԹԵԱՄԲ'


Հ.Մ.Ը.Մ.ակամ Վաստակաւոր Եղբայր Անդրեան՝

ԱԼԵՔՍԱՆ ՓԻԼԱՒՇԵԱՆԻ

(Այժմ ի լոս Անձելլս)

Ի Սէր եւ ի Զարգացում Հ.Մ.Ը.Մ.ի
Գայլիկներուն, Արծուիկներուն,
Արիներուն եւ Արենոյշներուն.

Շնորհակալութիւն Ազնիւ Բարերարին:



ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Սիրելի Գայլիկներ, Արծուիկներ, Արիներ եւ
Արենոյշներ,

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան հրատարա-
կութիւնը եղող այս երգարանը ամենէն առաջ ձեր երգարանն
է: Ան պատրաստուած է սկաուտական ձեր դաստիարակու-
թիւնը՝ նաև երգի նամրով, ամրողացնելու համար:

Այս երգերով, կոչերով ու կանչերով դուք պիտի ծա-
նօթանաք հայ երգին, հայ մշակոյթին եւ Հայոց Պատմու-
թեան: «Հ.Մ.Ը.Մ.ի Սկաուտական Երգարան»ը օգտագործեցէ՛ք
լաւագոյնս, ծանօթացէ՛ք անոր բառերուն ընդմէջէն մեր հե-
րոսներու կեանքին, մեր ազգային տենչերուն եւ մեր հայ-
րենիքի իրագործումներուն: Այս երգարանի գործածութիւնը
առիթ բող ըլլայ նաև ձեզի, որպէսզի միշտ երգէք մեր մայ-
րենի լեզուով եւ յիշեցէք միշտ թէ «միայն չարերը երգ չունին»:
Դուք բարի էք եւ արի:

Սիրելի Խմբապետներ,

Այս երգարանը պատրաստուած է օժանդակելու հա-
մար ձեզի որպէսզի ձեր դաստիարակութեան յանձնուած հայ
մատղաշ սերունդը վարժեցնէք հայ բառին ու հայ պատմու-
թեան՝ երգի ու նուազի նամրով:

«Հ.Մ.Ը.Մ.ի Սկաուտական Երգարան»ը կազմող բոլոր
երգերն ալ ունին իրենց ձայնագրութիւնները, որպէսզի
անոնց նշգրիտ ուսուցումը դիւրանայ եւ Հ.Մ.Ը.Մ.ի մեծ
ընտանիքին բոլոր անդամները զանոնք երգեն միօրինակ
ձեռով: Զայնագրութիւնները սկզբունքով դաշնակի համար
պատրաստուած են: Բնականարար մասնագէտ ուսուցիչներ
կամ խմբապետներ կրնան անոնցմէ մեկնելով վերծանումի
այլ ձեւերով կամ դաշնաւորումներով զանոնք զարգացնել:
Զայնանիշերու (նօրա) տակ վանկերու բաժանումը կատար-
ւած է հնչողական դիւրութեան նպատակով, առանց նկատի.

առնելու միավանկ բառերու ամրողականութիւնը յարգելու ժերականօրէն պարտադիր պարագան: Կանչերու վերջաւորութիւնները ըստ ղեկավարի հայեցողութեան կարելի է փոփոխութեան ենթարկել ըստ օրուայ կամ պարագայի բերման, օրինակ կարելի է ըսել՝

- Հ.Մ.Լ.Մ.ի արիները հոս են ահա
կամ Հ.Մ.Լ.Մ.ի Գայլիկները հոս են ահա
կամ Հ.Մ.Լ.Մ.ի արենոյշները հոս են ահա, եւայլն:

Երգարանի կազմութիւնը ամրողացուցած ենք տալով մեր օգտագործած երգերուն եւ առհասարակ Հ.Մ.Լ.Մ.ի մասին յօրինողներու, բանատեղծներու եւ երաժշտագէտներու համառօտ կենսագրութիւններ, նոյնպէս հակիրճ տեղեկութիւններ՝ արեւելեան եւ հայկական լարային (օր. ջութակ), փողային (օր. սրինգ) եւ հարային (օր. քմրուկ) երաժշտական գործիքներու մասին: Կը հաւատանք որ վերոյիշեալ յաւելումները օգտակար պիտի ըլլան մեր սկառուտական շարքերուն հայ երաժշտութեան եւ հայ երաժիշտներու մասին առաւել ծանօթացման:

Այս կստահութեամբ ձեզի կը յանձնենք ներկայ երգարանը եւ կ'ակնկալենք անոր ամենալայն չափով օգտագործումը բոլոր Հ.Մ.Լ.Մ.ականներուն կողմէ:

Փակելէ առաջ մեր խօսքը անհրաժեշտ կը համարենք յայտնել թէ Հ.Մ.Լ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան մատենաշարի ներկայ թիւ 2-ի պատրաստութեան եւ հրատարակութեան աշխատանիքին նպաստեցին Հոգշն. Տ. Տիրայր Վրդ. Փանոսեան, Քոյր Ռիթա Շամլեան, երաժշտագէտ Եղբ. Գէրոգ Գանտահարեան եւ Եղբ. Յակոր Ռսկերիչեան: Երգարանի կողքի-գծագրութիւնը սիրայօժար կատարեց արուեստագէտ Եղբ. Վազգէն Թիւթիւննեան: Զայնանիշերու գծագրութիւնը գործն է Եղբ. Սարգիս Փանոսեանի:

Հ.Մ.Լ.Մ.ի
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒԹԻՒՆ

Ա. ՄԱՍ

ՔԱՅԼԵՐԳՆԵՐ

ՅԱՌԱՋ ՆԱՀԱՏԱԿ

Երաժշտ.՝ Բ. Կանաչեան

Խոսք՝ Գ. Կառվարենց

Յա - ռաջ նահա - տակ ցե - ղի ան - մահներ վեց դա - բու ան - մոռ վրե -
ժի զը - բան - ներ կա - տարն հայ - րե - նի լե - բանց գե - ռա - գոյն եր -
թանք կո - թո - ղել դրօ - շակ ե-, աս - գոյն հըս - կայ նը - ւիր - ման տոր -
միդ հը - բա - թեւ կա - մա - ւոր բա - նակ յա - ռաջ յա -
սակ ան - սա - սան յա - ռաջ ան - ղե - ղեւ դէ - պի յադ - թա - նակ.

ՅԱՌԱՋ ՆԱՀԱՏԱԿ

Յառա՛ջ նահատակ ցեղի անմահներ,
Վեց դարու անմոռ վրէժի զրահներ.
Կատարն հայրենի լերանց հեռագոյն՝
Երթանք կոթողել դրօշակն եռագոյն:

Հսկայ նուիրման
Տորմի՛ն հըրաթեւ
Կամատ՛ր բանակ,
Յառա՛ջ անսասան,
Յառա՛ջ անդեղեւ,
Դէպի յաղթանակ:

Վատին սեւ արիւն մեր հողն ոռոգեց,
Տարագիր Հայն իր կեանքը նորոգեց,
Երէկ շղթայուած՝ այսօր ինքնավար,
Յարեալ վեհօրէն դամբանէն խաւար:

Հսկայ նուիրման
Տորմի՛ն հըրաթեւ
Կամատ՛ր բանակ,
Յառա՛ջ անսասան,
Յառա՛ջ անդեղեւ,
Դէպի յաղթանակ:

ՈՎ ՀԱՅ ԱՐԻ

The musical score consists of three staves of music in common time, key signature of one flat, and soprano vocal line. The lyrics are written below each staff.

Ով հայ ա-րի նախ քարծրա-ցիր մարմնով մըտքով հըսկայ դարցիր
Հանք միզ թա-փէ դու ա-մէն օր գործադադ-րե-լու քա-րիք մը նոր
Հանք միզ թա-փէ դու ա-մէն օր գործադադ-րե-լու քա-րիք մը նոր:

ԲԱՐՍԵՂ ԿԱՆԱՉԵԱՆ

Ծնած է Ռոդոսո 1885-ին կը փոխադրուի Պուլկարիա (Վառնա) ապա Ռումանիա ուր կ'ուսանի երաժշտութիւն եւ ջութակ ու դաշնակ նուագել: 1908-ին կը վերադառնայ Պոլիս եւ կը կազմէ Քնար նուագախումբը: 1910-ին հանդիպելով Կոմիտաս Վարդապետին կ'աշակերտէ անոր ու կը կատարելագործէ երաժտագիտական իր մասնագիտութիւնը դառնալով Կոմիտաս Վարդապետի հինգ սաներէն մին: 1920-ին կը մեկնի Փարիզ ծանօթանալու տեղոյն երաժշտական յառաջդիմութեանց: Ու հետզհետէ գտնուած է գաղթաշխարհի զանազն կեդրոնները Կիպրոս, Պէյրութ ուր կը կազմէ «Գուսան» երգչախումբը ունենալով յաջող ու խանդական ելոյթներ:

ՈՎ ՀԱՅ ԱՐԻ

Ով հայ արի նախ բարձրացիր,
Մարմնով մտքով հսկայ դարձիր,
Զանք ճիզ թափէ դու ամէն օր
Գործադրելու բարիք մը նոր:

Հնազանդէ մեծերուդ միշտ,
Մի պատճառեր ոչ ոքի վիշտ,
Ազգիդ համար միշտ աշխատէ,
Եղիր առոյգ և ճիշդ դատէ:

Գրեր ու մշակեր է բազմաթիւ մանկական, ազգային
եւ օբերայի եղանակներ: Նշանաւոր են իր «Օրոր»ը,
«Ալվարդի Երազ»ը, «Դալիլո»ն, «Հոյնար»ը:

Դաշնաւորած է «Յառաջ Նահատակ»ը խօսք Գ. Կառվա-
րենցի, դպրոցական ժայլերգ «Մենք Մանուկներ»խօսք Մու-
շեղ Խշանի:

Մեռած է Պէյրուք 1967-ին:

ՀԱՅ ԱՐԻՆԵՐ ԵՆՔ

Դաշնաւորում՝ Գ. Կառվարենց

The musical score consists of five staves of music in common time (indicated by 'c') and A major (indicated by a sharp sign). The lyrics are written below each staff in Armenian. The lyrics are:

Հայ ս - ըի - ներ ենք կարզա- պան Հ. Մ. Ը. Մ - ի ոլո-շին
 շուրջ աշ- խա - տանց - ներ ու - նինք քա - զում ծրա- գիր - ներ Վ-
 սեմ ու լուրջ հա - ւա - տա-ըիմ նախ Աս - տու - ծոյ
 թշ- ւա - ոռու-թեան դէմ ոչ ան- փոյթ ազ - գիդ հա-մար միշտ աշ-
 խ - տէ ե - դիր քա - ըի ոչ ոք ա տէ :

ԳԷՈՐԳ ԿԱՌՎԱՐԵՆՑ

Ծնած է 1892-ին Թուրքիա:

Նախնական ուսումը կը ստանայ Իզմիրի Մխիթար-
 եաներու Վարժարանը իսկ երկրորդական ուսումը Իզմիրի
 Ամերիկեան Քոլեջին մէջ, որ կ'աւարտէ 1908-ին:

Այնուհետև ուսուցչական ասպարէզը ընդգրկելով,
 կը դասաւանդէ Թուրքիոյ զանազան ժաղաքներուն՝ յատկա-
 պէս Անգարայի մէջ: Միաժամանակ կը գործէ ու կը ստեղծա-
 գործէ որպէս բանաստեղծ-գրագէտ եւ խմբագիր-մտաւորա-
 կան:

ՀԱՅ ԱՐԻՆԵՐ ԵՆՔ

Հայ արիներ ենք կարգապահ
Հ.Մ.Լ.Մ.ի դրօշին շուրջ。
Աշխատանքներ ունինք բազում
Ծրագիրներ վսեմ ու լուրջ:

Հաւատարիմ նախ Աստծոյդ
Թշուառութեան դէմ ոչ անփոյթ,
Ազգիդ համար միշտ աշխատէ
Եղիր բարի եւ ոչ ոք ատէ:

Բարձրանանք ու բարձրացնենք
Անյաղթ մնայ հայ ազգը,
Ուրախ ըլլանք երգենք զուարթ
Ապրի յաւէտ Հ. Մ. Լ. Մ.:

1938-ին զինք կը գտնենք Յունաստան ուր կ'անդամակցի Հ.Մ.Լ.Մ.ին որուն խտէալներուն մեծ հաւատացող մըն է եղած: Իր բանաստեղծութիւնները ամփոփուած են «Ծովեր», «Գերեզմանի Ծաղիկներ», «Տաւիդ Եւոլեան» եւ «Ճակատագրիս Ճանկերուն Մէջ» հաւաքածոներուն մէջ: Գրած է ազգայնաշունչ շարք մը բանաստեղծութիւններ որոնցմէ յատկապէս, «Կամաւորական քայլերգ, Յառաջ Նահատակ»ը որ Հ.Մ.Լ.Մ.ը որդեգրած է որպէս իր պաշտօնական բայլերգը:

Մեռած է 1946-ին:

Հ.Մ.Ը.Մ. ՀԱՅ ԱՐԻՆԵՐ

Երաժշտ.՝ Բ. Կանաչեան

Խոր՝ Մ. Իշխան

2. Ա. Հ. Հ. Ա. Իայ ա- րի -ներ հե- բոսնե- բու դա-
 մին ժա- ռանգ ա- ռողջ ու- րախ ու ան- վե- հեր
 մենք կը կեր- տենք մարմին ու կամք օ- տար աշ- իարն օ-
 տար դաշ- տեր թայց հայրե- նի վեհ դրօ-շին տակ պա-
 տիւն հա- յուն բո- նած միշտ վեր կը շահինք փառք ու յաղթա-
 նակ Հ. Ա. Հ. Ա. յոյ- սի սե- բունդ չու- նինք դադար
 չու-նինք նա- հանք դէ- զի չեռ- ներ լու- սա- ծը- նունդ
 մանք յաղ-թա-քայլ կ' երթանք յա- ռաջ:

Հ.Մ.Ը.Մ. ՀԱՅ ԱՐԻՆԵՐ

**Հ.Մ.Ը.Մ. հայ արիներ,
Հերոսներու դատին ժառանգ,
Առողջ, զուարթ ու անվեհեր,
Մենք կը կերտենք մարմին ու կամք:**

**Օտար աշխարհ, օտար դաշտեր,
Բայց հայրենի վեհ դրօշին տակ.
Պատիւն հայուն բռնած միշտ վեր՝
Կը շահինք փառք ու յաղթանակ:**

**Հ.Մ.Ը.Մ. Յոյսի սերունդ
Չունինք դադար, չունինք նահանջ,
Դէպի լեռներ լուսածնունդ
Մենք յաղթաքայլ կ'երթանք յառաջ:**

ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔ

Դաշնաւորում՝ Բ. Կանաչեան

Խօսք՝ Մ. Նալբանդեան

Մեր հայ- բե-նիք թրշ-ուառ ան- տէր ,մեր թրշնամեաց ոտ-նակոխ
իւր որ-դի- քը արդ կանչում է հա-նել իւր վրէժ քէն ու ոխքէն ուռի:

ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔ

Մեր հայրենիք թշուառ, անտէր,
Մեր թշնամեաց ոտնակոխ,
Իր որդիքը արդ կանչում է
Հանել իր վրէժ, քէն ու ոխ:

Մեր հայրենիք շղթաներով
Այսքան տարի կապկապած,
Իր քաջ որդոց սուրբ արիւնով
Պիտի լինի ազատուած:

Ահա՛, եղբայր, քեզ մի դրօշ,
Որ իմ ձեռքով գործեցի,
Գիշերները ես քուն չեղայ,
Արտասուքով լուացի:

Նայիր նորան երեք գոյնով,
Նուիրական մեր նշան,
Թող փողփողի թշնամու դէմ,
Թո՞ղ վերածնի Հայաստան:

Ամենայն տեղ մահը մի է,
Մարդ մի անգամ պիտ' մեռնի,
Բայց երանի՝ որ իր ազգի
Ազատութեան կը զոհուի:

ՄՅԱԿ ԲԱՆՈՒՈՐ

The musical score consists of eight staves of music in common time, featuring a treble clef and a key signature of one sharp (F#). The lyrics are written below each staff in Armenian. The lyrics are as follows:

Մը - շակ թանուոր բէնջբեր աղ - քեր: Ա - րիք մի - ա-
 նանք յա - ռա - զ գր - նանք: Աշ - խա - տան - քի դա - տին պաշտ-
 պան դաշ - նակ-ցու - թեան թեւ թի-կունք տանք: Ախ մենք տանգ
 ուենք քըր - տի - նք թա - փենք ա- րիւն վաս տակ դատենք դի-
 գենք շա - հա-գոր - ծող ցե - ցեր վատ - նեն իսկ մեր՝ չոր
 հաց քա-ժի - ն հա - նե - ն դէ սել օ - րեր քո-ղոք դար-
 ձէր ա - րիւ - ն քըր - տինք եր - կու - նք մը -
 տէր տանջանք զըր - կանք լե-ցու ա - ուէր դաշ նակցութեան նամրայրացէր:

ՄՇԱԿ ԲԱՆՈՒՈՐ

Մշակ, բանուոր, րէնջպէր աղբէր,
Արի՞ք, միանանք, յառաջ գնանք,
Աշխատանքի դատին պաշտպան
Դաշնակցութեան թեւ թիկունք տանք:

Ա՛խ, մենք տանջուենք, քրտինք թափենք,
Արին-վաստակ դատենք, դիզենք,
Շահագործող ցեցեր՝ վատնեն,
Իսկ մեզ՝ չոր հաց բաժին հանեն:

Դե՛հ, սե՛ օրեր բողոք դարձէք,
Արին-քրտինք, երկունք մըտէք,
Տանջանք, զըրկանք, լեզու առէք,
Դաշնակցութեան ճամբալ բացէք:

ՔԱՅԼԵՐԳ ՄԱՐՏԱԿԱՆ

ԷՏԿԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

Ծնած է 1930-ին Երեւան: Մինչեւ 1953, Երեւանի երաժշտանոցին մէջ կը հետեւի երաժշտական ուսման, որու աւարտումին մինչեւ 1957 Մոսկուայի մէջ կը շարունակէ իր երաժշտական զարգացումը:

Էտկար Յովհաննէսեան Հայ երաժշտութեան նպաստած է գլխաւորաբար Հայ ժողովրդական եւ դասական երաժշտութեանց բերած իր ինքնատիպ մօտեցումով: Իր յօրինումներուն գլխաւոր նիւթը կը կազմէ ժողովուրդը իր արօր-

ՔԱՅԼԵՐԳ ՄԱՐՏԱԿԱՆ

Յառաջ ընթանանք, եղբայրնե՛ր,
Մարտի հրաւէր կարդալով,
Հայրենեաց ազատութիւնը
Գընենք մեր սուրբ արիւնով:

Բաւ է որքան տառապեցանք,
Բաւ է որքան մենք լացինք,
Այսուհետեւ մարտի դաշտը
Կոհի տալով պիտ' մեռնինք:

Եայով: Իր մասնագիտութիւնը կը ծաւալի հայկական պալէ-ներու ստեղծագործումով: Այս մարզէն ներս իր գլխաւոր գործերն են. «Մարմար»ը, «Յաւերժական Կուռք»ը, «Անտունի»ն եւ «Սասունցի Դաւիթ»ը: Մեծ ժողովրդականութիւն կը վայելին «Երեւան-Երերունի» «Արփա-Սեւան» եւ «Սարդարապատ» երգերը: Հայաստանի եւ Սովետական Միութեան երաժշտական միջավայրերուն մէջ Յովհաննէս-եան ունի իր պատուոյ տեղը: Իր երաժշտական ստեղծագործութիւնը արժանացած է ամենաբարձր գնահատութեանց:

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՔԱՅԼԵՐԳ

Երաժշտ.՝ Բ. Կանաչեան

Խուզ՝ Մ. Իշխան

Մենք մանուկնե - ր չա - յոց ազ - գին ծա - գող լոյ - սի - ն
հետ առողութան միշտ կենսութան եւ ժըպտա - գին կ'երթանք դպրոց
շա - րան շա - րան մեր սա - կառն է թէ - եւ աղ - քառ
քայց մերն է կեանքն ու ա - պա - զան եւ գըր - թե - րու
զանձն է ա - ռատ մեր թե - ւե - րուն առկ ահ - րա - կան
լոյ - սի օ - նա - ի նայ - ըն - սի տուն դըպ - րո - ցէն նե - րս
մեր սի - րա - կան կը հըլէտ միշտ մեր սուրբ լե - զուն
եր - զի մը պէս յա - ւերժա - կան յա - ւերժա - կան:

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՔԱՅԼԵՐԳ

Մենք մանուկներ հայոց ազգին
Ծագող լոյսին հետ առտուան
Միշտ կենսուրախ եւ ժպտագին
Կ'երթանք դպրոց շարան շարան:

Մեր սակառն է թէեւ աղքատ
Բայց մերն է կեանքն ու ապագան
Եւ գրքերու գանձն է առատ
Մեր թեւերուն տակ տիրական:

Լոյսի օճախ հայրենի տուն
Դպրոցէն ներս մեր սիրական
Կը հնչէ միշտ մեր սուրբ լեզուն
Երգի մը պէս յաւերժական:

Հ.Օ.Մ.ի ՔԱՅԼԵՐԳ

Սենք ուխտեալ - ներ հայ օգնու - թեան սուրբ գոր - ծին
լոյ - սի բա - նակ եւ զը-թու - թեան իա - շու - հի
զո - յա - մար - տին մէջ սըր-բա - զան մեր դա - տին
մենք կը բե - բենք հայ կը - նոյ սիր-տը ոս - կի
օ - տար երկ - րի հո - վե-րուն դէմ մո-լե - զին
հայ դրգ-րու - թեան ջա - հը պա - հենք մըշ-տա - վառ
եւ թող շունչ տայ հայ օ - մա - իի կը - րա - կին
մեր շըրթ-նե - րուն վրայ ծաղ-կող ա - մէն բառ:

Հ. Օ. Մ.ի ՔԱՅԼԵՐԳ

Մենք՝ ովատեալներ Հայ Օգնութեան Սուրբ գործին,
Լոյսի բանակ և գթութեան Խաչուիի,
Գոյամարտին մէջ Սրբազան մեր Դատին՝
Մենք կը բերենք Հայ կնոջ սիրտը Ոսկի:

Օտար երկրի հովերուն դէմ մոլեգին,
Հայ դպրութեան ջահը պահենք մշտավառ,
Եւ թող շունչ տայ Հայ օճախի կրակին՝
Մեր շրթներուն վրայ ծաղկող ամէն բառ:

Մենք ովատեալներ Հ. Օ. Մ.ի Պայծառ Դրօշին,
Միշտ կը մնանք արի Պահակն անցեալի,
Մինչեւ ծագի արդարութեան վառ արփին,
Մինչեւ հասնինք սէգ Սարերուն Հայրենի:

ԱՐԾՈՒԻԿՆԵՐՈՒԻ ՔԱՅԼԵՐԳ

Երաժշտ.՝ Բ. Կանաչեան

Խոօսք՝ Արմեն Անուշ

ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ

Ծնած է 1924-ին Զանախչիի մէջ:

Նախնական ուսումնէն ետք 1945-ին կ'աւարտէ Երեւանի քանասիրական համալսարանը իսկ 1955-ին Մոսկովյայի Մաքսիմ Կորժի գրականութեան հիմնարկը:

Բազմավաստակ քանաստեղծ, հրապարակագիր մաս կազմած է Հայաստանի Գրողներու Միութեան Վարչութեան իրրեւ քարտուղար ինչպէս նաև Սփիտքի հետ Բարեկամութեան եւ Մշակութային Կապի հայկական ընկերակցութեան:

Բանաստեղծական իր գրութիւններուն առնեթեր մշակած է հայ քանաստեղծութեան տեսական հիմունքներու մասին յատկանշական յօդուածներ զատորոշելով իւրաքանչիւր ձեւի քանաստեղծութեան ներշնչման, եւ զարգացման յատ-

ԱՐԾՈՒԻԿՆԵՐՈՒ ՔԱՅԼԵՐԳ

Զուարթ ու շենշող, կայտառ ու արի
Մենք հուր եռանդի ազնիւ պայքարի
Արծուիկներ հպարտ ոգիով ցեղին
Կ'երթանք անվարան պայծառ գալիքին:

Ինչպէս սրընթաց ջրերը գարնան
Ինչպէս վարարած գետն հայրենական
Կ'ընթանանք արագ, կը սուրանք առաջ
Մենք արծուիկներն ենք ցեղին աննահանջ:

Օ՛ն ոտքի պատրաստ արծուիկներ բոլոր
Դեպի հայրենի սարերն հեռաւոր
Դեպի լուսաշող երկիրն Հայաստան
Դեպի յաղթութիւն, դեպի ապագան:

կանիշերը: Ցատուկ ուսումնասիրութիւններով խորացուցած
է Նարեկացիի, Մեսրոպ Մաշտոցի, Կոմիտասի, Քուչակի,
Դարեանի, Թումանեանի, Զարենցի եւ այլ ժամանակակից
բանաստեղծներու մասին իր պրատումները, յատուկ արժեք
ունին Սայաթ Նովայի գործերուն մէջէն իր դուրս բերած
առանձնայատկութեանց նկատումները:

Նշանաւոր են իր «Հրամայում են», «Սիրոյ Ճանապարհ»ը եւ «Նորից Քեզ Հետ» հաւաքածոները: Ունի նաև
քարգմանական վաստակ, յատկապէս ոռուական բանաստեղծներու գործերուն:

Իր ամենէն նշանաւոր բանաստեղծութիւնն է, երկարաշունչ «Անլոելի Զանգակատուն»ը որ Կոմիտաս Վարժապետի կեանքի ու գործի բագինը կը կազմէ:

Մեռած է : 1971-ին արկածի մը հետեւանքով եւ քաղ-
ուած իր ծննդավայրին մէջ (այժմ Սովետաշէն):

Բ. ՄԱՍ

ԱՊՈԹՔՆԵՐ

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՔ

(ՀԱՅՐ ՄԵՐ)

Երաժշտ.՝ Մ. Եկմալեան

Հայր մե - ր ո ո ր յեր-կինս եւ սուրբ ե-ղի-ցի
ա - նուն քո. ե - կե ս - ցէ ար-քայ - ու - թիւն քո,
ե - ղի - ցին կամք քո ո - ր պէս յեր-կինս եւ յե - ր
կրի զնաց մեր հա - նա - պա-զորդ տուր մեզ ո - յ-
առ թո - ղ մեզ զգ - պար- տիս մեր, ո - ր-պէս եւ մեզ
թողումք մերոց պար-տա - պա - նաց եւ մի ու նիր
զմեզ ի փոր-ձու - թիւն. ա - յլ փօր- կեա
ի չա - - րէ:

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՔ **(ՀԱՅՐ ՄԵՐ)**

Հայր մեր որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո,
եկեսցէ արքայութիւն քո, եղիցին կամք քո որպէս
յերկինս եւ յերկրի, զհաց մեր հանապազորդ տուր
մեզ այսօր, թող մեզ զպարտիս մեր որպէս եւ մեք
թողումք մերոց պարտապանաց եւ մի տանիր զմեզ
ի փորձութիւն, այլ փրկեա ի շարէ:

ԱՐԱԿՈՅ ԼՈՒՍՈՅ

Խոսք՝ Ն. Շնորհալի

A musical score for a vocal piece. The music is in 4/4 time, common time, or a similar signature. It consists of four staves of music, each with a treble clef. The lyrics are written below the notes in Armenian. The lyrics are:

Ա - ռա - ռոս լուսոյ յ ա - բե - զակն ար-
դա - - - ը առ իս լոյս ծագ - եա ըր-իումն ի չօ -
բէ - - - բըն - եա ի չոգ-լո - - յս բան բեզ ի հա -
օն - - - -յս:

ԱՌԱԽՈՏ ԼՈՒՍՈՅ

Առաւոտ լուսոյ,
Արեգակն արդար,
Առ իս լոյս ծագեա':

Բղխումն ի հօրէ,
Բղխեա' ի հոգույս,
Բան քեզ ի հաճոյս:

Գանձդ ողորմութեան,
Գանձիդ ծածկելոյ,
Գտող զիս արա':

Դուռն ողորմութեան,
Դաւանողիս բաց,
Դասեցո վերնոցն:

Երրեակ միութիւն,
Եղելոց խնամող,
Եւ ինձ ողորմեա':

Զարթի'ր Տէր յօգնել,
Զարթո' զթմրեալս,
Զուարթնոց նմանիլ:

Է՞ր հայր անսկիզբն
Էակից որդի,
Է միշտ սուրբ հոգի:

Ընկալ զիս գթած,
Ընկալ ողորմած,
Ընկալ մարդասէր:

Սէր անուն Յիսուս,
Սիրով քով ճմլեա',
Սիրտ իմ քարեղէն:

Վասն գթութեան,
Վասն ողորմութեան,
Վերստին կեցո':

ԽՈՐՀՈՒՐԴ ՄԵԾ

Խորջուրդ մեծ ծ բլ - սքա ն
չե լի որ յա յսմ
ա - լուր յա յս նե ցաւ: զն -
վիւրն ե ռ գե ն ընդ հրե 2
աս կս տան ա - ւ բ -
ահս ա 2 իս ռ ի բ - :

ԽՈՐՀՈՒՐԴ ՄԵԾ

Խորհուրդ մեծ եւ սքանչելի որ յայսմ աւոր
յայտնեցաւ:

Հովհիքն երգեն ընդ հրեշտակս տան Աւետիս
աշխարհի:

*
* *

Քրիստոս Ծնաւ եւ Յայտնեցաւ:

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ

Ծնած է 1869-ին Քէօթահիա (*Թուրքիա*): Հազիւ 12
տարեկան հասակին որրացած կը մտնէ Էջմիածնի Գէորգեան
նեմարանը, ուր ի յայտ կու գայ երաժշտութեան հանդէպ իր
խոր հետաքրքրութիւնը:

Կոմիտաս արեղայ գրի կ'առնէ եկեղեցական հին եղա-
նակներ եւ Արարատեան դաշտի գեղջկական երգեր, որով
արդիական ձայնանիշերով կազմաւորող առաջին հայ երա-
ժշտագէտը կ'ըլլայ:

Երաժշտական իր ուսումը կատարելագործելու համար
զինք կ'ուղարկեն Պերլին:

1899-էն ետք վերադառնալով Էջմիածին համերգներ
կու տայ նեմարանի երգչախումբով Հայաստանի եւ Կովկասի
մէջ:

1910-էն սկսեալ կը հաստատուի Պոլիս ուր կը կազմէ
«Գուսան» երգչախումբը:

Կոմիտաս Վարդապետ Թուրքիոյ կողմէ Հայութեան
եւ անոր աւագանիին դէմ կազմակերպած ջարդէն ազդուած
իր ստեղծագործութեանց վերջ կը դնէ եւ իր օրերը կը վեր-
ջացնէ Փարիզի հոգեբուժական կեդրուններուն մէջ:

ԳՈՎԵԱ ԵՐՈՒՍԱՂԵՄ ԶՏԷՐ

Մշակում՝ Մ. Եկմալեան

The musical score consists of ten staves of music for voice, arranged in two systems. The first system has five staves, and the second system has five staves. The key signature varies between staves, including B-flat major, A major, and G major. The time signature also changes, including common time and 3/4 time.

Lyrics (transliteration):

Գու վեա ն-րու - սա - ղէմ ըզ - տէր Յար- իաւ օրիս-
 առ - - - - ս ի մե - նե - - - -
 լոց ս - լէ - լու իա ե - կայք ժողո -
 վու -- - - բոք եր - զե - ցէ - - - պ
 տեառն ա - լէ - լու իա փառց հօր եւ որդ-
 ւոյ եւ հոգ - ւոյն -- սըր - ըոյ այժմ եւլմիշտ եւ յաւի-
 տեանս յա - լի - սե - նից ա - մէն: Յարուցե - լոյն ի մեռե-
 լոց ա - լէ - - լու իա -- որ զաշ - իար - հըս լուսա -
 ւո - բեաց ա - լէ լու - իա:

ԳՈՎԵԱ ԵՐՈՒՍԱՂԵՄ ԶՏԷՐ

**Գովեա՝ Երուսաղեմ զՏէր:
Յարեալ Քրիստոս ի մեռելոց: Ալելուիա:
Եկայք ժողովուրդք, երգեցէք Տեառն,
Ալելուիա:**

**Փառք Հօր եւ Որդոյ եւ Հոգոյն Սրբոյ,
այժմ եւ միշտ յախտեանս յախտենից ամէն:
Յարուցելոյն ի մեռելոց, Ալելուիա,
Որ զաշխարհս լուսաւորեաց, Ալելուիա:**

ՆՈՐԱՀՐԱՅ

ԾԱՐԱԿԱՆ ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ

Ն. Շնորհակի

նո - րա - հրա - - - - - 2 պը - սա - կա - ւար
 եւ զօ - րա - զլուկա - ռա - բին - եաց վա - ռե - ցար
 զի - նու հոգ - ւոյն ա - ռի - ա - բար
 ընդ - դէմ մա - հու: Վար - դա - - - ն քաջ նա-հա - տակ
 որ վա - նե - ցեր ըզ - թոշ - նա - միւ - ն վար - դա - գոյն
 ար - եամ - քըդ քո պը - սա - կե - ցեր զե - կե - դե - ցի:

ՆՈՐԱՀՐԱՇ ԾԱՐԱԿԱՆ ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ

Նորահրա՛շ պլսակաւոր եւ զօրագլուխ առաքինեաց,
Վառեցար զինու հոգւոյն արիաբար ընդդէմ մահու,
Վարդա՛ն, քաջ նահատակ որ վաճեցեր ըզթշնամին,
Վարդագոյն արեամբըդ քո պսակեցեր զեկեղեցի:

Երկնաւոր թագաւորին զինու յաղթեալ պատերազմին,
Խոհական իմաստութեամբ խոհեմացեալ անճառապէս,
Խորէն, խորհըրդական եւ ծանուցեալ անուն բարի,
Խաչելոյն վկայ եղեալ, հեղմամբ արեան պսակեցաւ:

ՃԱՇՈՒ ԱՂՕԹՔ

օրհ - սէ ով Աստուած օրհնէ այս սե - դա - նը եւ ա -
 նոր շուրջին - նե - ռը եւ տուր ա - մէն ա - - նընց
 որ չը - քաւոր են Ա - մէն:

ԿԱՐԱ ՄՈՒՐՁԱ.

Քրիստափոր Կարա Մուրզա բուն անունով՝ Մարգարեան ծնած է Խրիմի մէջ 1854-ին: Իր ծննդավայրին մէջ հազիւ կրնայ ստանալ նախնական ուսում, հետեւելով նաեւ երաժիշտ Կարապետ Խանքէկեանի հետ դաշնակի ծանօթացման, որմէ յետոյ ինքնաշխատութեամբ իր գիտութիւնը կը զարգացնէ եւ կ'որոշէ նուիրուիլ երաժշտական ասպարեզին:

Իր երիտասարդութեան շրջանը կը համապատասխանէ Հայ ազատագրական շարժումներու օրերուն, այդ պատճառով ալ Կարա Մուրզա կը ներշնչուի ազատագրական զարթօնքը մարմնաւորող շարժումներէն: Երգի ու նուագի նամրով Խրիմի հայութիւնը կը հետեւի այս շարժումներուն մեծ խանդավառութեամբ եւ Կարա Մուրզա կը կազմէ ու կը դեկավարէ երգչախումբ մը ստանալով մեծ քաջալերանի:

ՃԱԾՈՒ ԱՂՕԹՔ

Օրհնե՛ ով Աստուած
Օրհնե՛ այս սեղանը
Եւ անոր շուրջինները
Եւ տուր ամէն անոնց
Որ չքաւոր են, ամէ՛ն:

Խրիմէն Կարա Մուրզա կը մեկնի Թիֆլիս ուր կը ծանօթանայ Գրիգոր Արծունիին, Բաֆֆիին, Պետրոս Աղամեանի որոնք կը բազալերեն, երաժիշտին տաղանդը եւ կը յաջողցնեն կազմութիւնը բազմաձայն երգչախումբի մը: Այս Երգչախումբի ելոյթները մեծապէս կը խանդավառեն հայութիւնը եւ Կարա Մուրզա կը դառնայ հայ առաջին բազմաձայն երգեցողութեան հիմնադիրը: Թիֆլիսէն Կարա Մուրզա իր երգչախումբով շրջապտոյտներ կը կազմակերպէ Կովկասի, Ուքրանիոյ, Մոլտավիոյ եւ Պաքուի շրջանները ուր հայկականի կողմէն կը մշակէ նաև տեղացի ժողովուրդներու երգերը:

1887-ին կ'անցնի Պոլիս ուր կը ծանօթանայ հայկական պատարագի երգեցողութեան, կը բազալերուի Խրիմեան Հայրիկի կողմէ եւ կը ծրագրէ դաշնաւորել հայկական պատարագի երգեցողութիւնը: 1893-ին կը երաւիրուի Էջմիածին եւ 1894-ին առաջին անգամ ըլլալով Մայր Տաճարին մէջ կ'երգը բազմաձայն պատարագ որու դէմ պահպանողական տարեր բողոք կը բարձրացնեն:

Իր գործէն ծանօթ են յատկապէս «Ալաքեազ»ը, «Վարդ Կոշիկս», «Լէպ Հօ Լէ» եւ այլ երաժիշտներու երգերուն մշակումները «Պոյդ Բարձր», ծանօթ է իր «Շուշան» օրերան:

Կարա մուրզայի բազմաձայն երգեցողութեան մասնագիտութիւնը այնուհետեւ կը զարգացնեն՝ Մակար Եկմալեան, Գրիգոր Սիւնի, Կոմիտաս Վարդապետ եւ ուրիշներ:

Կը մեռնի 1902-ին:

Գ. ՄԱՍ

**ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ
ԵՐԳԵՐ**

ՄԵՆՔ ԱՆԿԵՂԾ ԶԻՆՈՒՈՐ ԵՆՔ

Դաշնաւորում՝ Գ. Կառվարենց

ՄԵՆՔ ԱՆԿԵՂԾ զինս Լոր ենք
ա-հան - ձին վի-
թակ, ուել անք ծա- ուա- յել եր-կար ժա-մա-
նակ, Պարս-կաս- ուա- նի խոր- ըից ե- կել է նա- մակ
գյու ենում ենք թա- բով կուշ-շա-նանք տա-րով, Աբիւն սուր ունուր.
պա- ան- բազ- ժի դաշտ կը ս- պա- սեն ժե- զի:

ՄԵՆՔ ԱՆԿԵՂԾ ԶԻՆՈՒՈՐ ԵՆՔ

Մենք անկեղծ զինուոր ենք առանձին վիճակ,
Ուխտել ենք ծառայել երկար ժամանակ.
Պարսկաստանի խորքից եկել է նամակ,
Գնում ենք բարով, կ'ուշանանք տարով,
Արին, սուր ու հուր պատերազմի դաշտ
կը սպասեն մեզի:

Դուշմանը մեզ տուեց «ջան ֆիդա» անուն,
Այդ անուան համաձայն տեսաւ զօրութիւն.
Մենք չենք ուզեր ազատ կամքի բռնութիւն,
Ուխտել ենք կռուել, այդ սիրով մեռնել,
Համոզուած ենք որ միայն զենքով կայ հայոց
փրկութիւն:

Ստամբօլը պիտի լինի արեան ծով,
Ամէն կողմից կոխի կը սկսի շուտով.
Կոտորից Բաշկալայ, անցնինք հեշտ կերպով,
Աջից Վարդանը, ձախից Խշանը,
Գրաւենք Աղբակ, տարածենք սարսափ,
Փառք ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ:

Բաշկալայ գաւառում, այն պատերազմում,
Աւելի մեծ սարսափ տիրեց թշնամոյն.
Քաջ Զէյթունը յաղթեց վատ, չար գազանին,
Կեցցէ Զէյթունը, խրոխտ Սասունը,
Դաշնակցութիւնը,
Բախտաւոր օրեր, պարգևեց հայուն:

ԿԱՐԿՈՒՏ ՏԵՂԱՅ

Խոսք՝ Թորոս

Դաշնաւորում՝ Գ. Կառվարենց

Կար կուտ տեղաց նա - նա - սո - րայ դաշ - տու մը Ֆէ - տա - յի - ներ
դաշ - նակ - ցա - կան վը - ըի - ժա - ռու զո - ռում են զո - ռում են:

Սապ

Տանձաձեւ մարմինով, շուրջ մեկ մեթք երկարութեամբ լարային գործիք։ Շինուած է փայտէ եւ ունի աղիքէ ութք լարեր իւրաքանչիւր 2 լար մեկ ձայնի համար։ Կը նըւագուի կտուցակերպ ոսպնեակի մը կսմիթով։ Օգտագործըւած է առաւելաբար հայ գիւղական աշուղներու կողմէ։

ԿԱՐԿՈՒՏ ՏԵՂԱՑ

Կարկուտ տեղաց Խանասորայ դաշտումը,
Ֆէտայիներ դաշնակցական վրիժառու գոռում են:

Սոսկաց Քիւրդը՝ լեղապատառ Մազրիկցին,
Տէր երազում ջնջուել ի սպառ քաջ ֆէտայու գնդակից:

— Եաման, Աստուած, ֆէտան եկաւ ուր փախչինք,
Ասաց որդուն կրծքին սեղմած լեղապատառ քրդուհին:

— Մի՛ փախենար, հանգիստ կեցիր, բաջի ջան,
Կանանց երբեք ձեռք տալու չէ վրէժխնդիր քաջ ֆէտան:

Մի՛ ժամուայ մէջ Մազրիկ ցեղը ջնջուեցաւ,
Խանասորայ կանաչ դաշտը կարմիր գոյնով ներկուեցաւ:

Փշի՛ր, շեփոր, դէա՛ Արառու մենք թոշենք,
Դիրբեր բոնենք, գաթա, հալուա ձիւնի ջրով ճաշակենք:

Մերթ կուում է, մերթ բարձրանում քաջ ֆէտան,
Եզակի է պատմութեան մէջ արշաւանքի տեսարան:

Զկար Կարօն, տխուր պատեց ամէնքին.
Երանի՛ է նրա հոգուն, որ զոհ դարձաւ այդ կոուին:

Քեզ ենք յանձնում, մեր քաջերը ո'վ պաշտելի,
Արառու,
Կրծքիդ մէջը ամուր պահիր անմահ զոհերն Հայերուն:

Կը գայ շուտով շղթան կտրած Հայ մարդը,
Մեր զոհերը ամուր պահիր գրկիդ մէջը խնկելի:

Հայե՛ր, յիշեք նուիրական այդ օրը,
Յուլիս ամսու քանինգին կատարեցեք մեր տօնը:

Ի ԶԵՆ ՀԱՅԵՐ

ի զէն հայեր ի սուր եւ ի հը-րա- ցա - ն
 տաԾկա- հայաս- տա - նից կո-չում է մի ծայն. լեռնից քեռթըն
 դում է ա-հեղ հը-րա - մա - ն թըրէք հայեր թը - ռէք
 դէպի Հա-յաս-տան դէ - պի դէ - պի դէպի Հա-յաս-տան
 դէ - պի դէ - պի դէ-պի Հայաս-տան թը - ռէք հա- յեր
 դէ-պի Հայաս- տան:

Ի ԶԵՆ ՀԱՅԵՐ

Ի զէն, հայեր, ի սուր և ի հրացան,
Տաճկահայաստանից կոչում է մի ձայն.
Լեռնից լեռ թնդում է ահեղ հրաման,
Թուշ՝ ք, հայեր, թուշ՝ դեպի Հայաստան:

Դեպի, դեպի, դեպի Հայաստան,
Թուշ՝ ք, հայեր, դեպի Հայաստան:

Արեւելք և արեւմուտք, հարաւ և հիւսիս,
Դդրդաց ու թնդաց քաղցր աւետիս,
Հայկայ քաջ զաւակաց արի կրծքերից,
Ազատութիւն հնչեց ամէն կողմերից:

Ամէն, ամէն, ամէն կողմերից,
Ազատութիւն հնչեց ամէն կողմերից:

Փրկութեան աւետիք առած ի բերան՝
Խումբ խումբ հայեր դեպի Տաճկահայաստան,
Դիմում են ցնծութեամբ իբրև հարսանիք,
Ուխտած՝ սուրբ արիւնով փրկել հայրենիք:

Փրկել, փրկել, փրկել հայրենիք,
Ուխտած՝ սուրբ արիւնով փրկել հայրենիք:

Տաճկահայաստանը ոտքի է կանգնում,
Անիւծաբոց վրէժ, վրէժ է գոռում,
Արիւնով ներկուած են բոլոր դաշտերը,
Արիւնով ներկուած են բոլոր գետերը:

Բոլոր, բոլոր, բոլոր դաշտերը,
Արիւնով ներկուած են բոլոր գետերը:

Թշնամին զարհուրած փախուստի է դիմում,
Անթիւ աւար ու գանձ իր յետին թողնում.
«Յաղթութի՛ւն, յաղթութի՛ւն» գոչենք միաձայն,
Թշնամին պարտուած է, կեցցէ՛ Հայաստան:

Կեցցէ՛, կեցցէ՛, կեցցէ՛ Հայաստան
Թշնամին պարտուած է, կեցցէ՛, Հայաստան:

ՎԵՐՔԵՐՈՎԸ ԼԻ

Վեր-քե-րով լի ծան ֆի-տայ եմ թա-փա-

ռա-կա-ն տուն չու - նեմ եա-րիս փո - խա-ն

գէնքս եմ գըր-կե - լ մի տեղ հան-գիստ քուն չու - նեմ:

եա-րիս փո - խա-ն գէնքս եմ գըր-կե - լ

մի տեղ հան - գիստ քուն չու - նեմ:

ՎԵՐՋԵՐՈՎ ԼԻ

Վերքերով լի ջան ֆիտա եմ,
Թափառական տուն չունեմ,
Եարիս փոխան զէնքս եմ գրկել,
Մի տեղ հանգիստ քուն չունեմ:

Արնոտ երկիր սուգ ու շիան,
Ինձ դուրս կանչեց փակ կեանքից,
Տանջուած հայրենիքի սէրը,
Չը վախեցրեց ինձ վտանգից:

Ես կոչուեցայ ջան ֆիտայի,
Դարձայ զինուոր գաղափարի,
Թող իմ թափած արեան շիթեր,
Օրինակ դառնան հայ զինուորի:

Ահա հանգիստ հող կը մտնեմ,
Յոյսս դուք էք, ընկերներ,
Շարունակէք մեր սուրբ գործը,
Դաշնակցութեան վեհ քաջեր:

ԿՈՐԻՆԻ ԵՐԹ

Հայ եղ - բայր-ներ դէն զունդ ի զունդ ար-եան դաշ-աը մենք նետուինց
Սու- ըլը ծե- ոին նու - ըը կըրծ-ըին վա - ռած սըրտեր

բոր - ըո - ըին Ա - բե - ւել - ըից լոյս է ծա - գում

եւ Հա - յաս - տան ուժ- զին ցն - ծում, օն յա - ռաջ օն ի

մարտ օն ի հրա- զայր մեր ա - բիւն նով մեր ա - բիւ-նով մամբայ

բա- նանց նայ եղ - բարց չան եղ- բարց թշշ - նամ-ւոյն դէմ

մենք սը - լա - նանց նե - ղե - ղի պէս փո - թոր - կի պէս

նրա ա - բիւ - նով լեռ - ներ ներկենց պիղծ դի - ա- կով դաշտեր պատենց:

թող զըն - դա - կի տա- ըափ թա - փի լա- փի թող կեր-

թող մեզ ա - նարզ մա - հը թա - փի լա- փի թող կեր-

ջա - պէս սես - նէ վա - թան պար-զած դրօ-շակ Ա - զա - սու - թեան:

ԿՌՈՒԽԻ ԵՐԹ

Հայ եղբայրներ, դէ՞հ, գունդ ի գունդ,
Արեան դաշտը մենք նետուինք,
Սուրբ ձեռին, հուրը կրծքին
Վառած սրտեր բորբոքին:

Արեւելքից լոյս է ծագում
Եւ Հայաստան ուժգին ցնծում
Օ՛ն, օ՛ն յառաջ,
Օ՛ն ի մարտ, օ՛ն ի հրազայր,
Մեր արիւնով, մեր արիւնով,
Ծամբայ բանանք հա՛յ եղբարք, ջա՛ն եղբարք:

Թշնամոյն դէմ մենք պանանք
Հեղեղի պէս, փորորիկի պէս,
Նրա արիւնով լեռներ ներկենք
Պիղծ դիակով դաշտեր պատենք:

Թող գնդակի տարափ թափի
Թող մեզ անարգ մահը լափի,
Թո՞ղ վերջապէս տեսնէ վաթան,
Պարզած դրօշն Ազատութեան:

ԱՆԴՐԱՆԻԿԻՆ

հր - բեւ ար - ծիւ սա - ւառ - նում ես լեւ ու ժայն
 թըն - դա - ցը - նում ես եր - կինք եր - կիր տես - չա - վառ
 քաջ ա - նու - նըդ պի - տի յի - շուկի դա - րէ դար
 հըս - կայ լե - ռինք քեզ ա - պաս - տան Ան - դրա - նիկ:

ԱՆԴՐԱՆԻԿԻՆ

Խրբեւ արծիւ սաւառնում ես լեռ ու ժայռ,
Թնդացնում ես երկինք երկիր տենչավառ,
Քաջ անունդ պիտի յիշուի դարէ դար,
Հսկայ լերինք քեզ ապաստան, Անդրանի՛կ:

Թշնամիներ երբ լսեն քո անունը,
Օձերի պէս պիտ' սողան իրանց բոյնը,
Երակներիդ ազնի քաջի արհինը
Չը ցամաքէ՛ մինչ յախտեան, Անդրանի՛կ:

Հայոց կուսանք դափնեայ պսակ թող հիւսեն,
Քնքուշ ձեռամք քո ճակատը պըսակեն,
Գոհարներով անվախ կործքդ զարդարեն
Կեցցէ՛ս յաւէտ դու անսասան, Անդրանի՛կ:

Հայաստանի սոխակները քեզ համար
Թող դայլայեն գիշեր-ցերեկ անդադար,
Անյաղթ մնաս, դու քաջ կոռուի սիրահար,
Հայրենիքի տէր ու պաշտպան, Անդրանի՛կ:

ԽԱՆԻ ԵՐԳԸ

Խու - սին չը - կար մութ գի - շեր էր մի խումբ կ` եր- թար
 ա - բազ ա- բազ տե- սանց որ բազ լա - նի խումբն է¹
 զի - նուած է - ին բո - լոր նը - բանց:

ԽԱՆԻ ԵՐԳԸ

Լուսին չկար, մութ գիշեր էր,
Մի խումբ կ'երթար արագ-արագ,
Տեսանք որ քաջ խանի խումբն էր,
Զինուած էին բոլոր նրանք:

Հրացանները ուսերին,
Դրօշակը պարզել էին,
Գնում էին ուրախ զուարթ
Ազատութի՛ւն երգում էին:

Երբ քաջ Խանը ելաւ Բասէն,
Թնդանօթներ արձակեցին,
Հայ քաջերի մոսիններից,
Գնդակներ գողզողացին:

Կեցցէ՛ Խանը իր խմբովը,
Սարսափ թողեց Բասենումը.
Երեք օր ու գիշեր կռուեց,
Աշքերիցը կտրեց քունը:

Կեանքերը ազգին նուիրած,
Կրտին Խանը առաջ ինկած,
Գնում էին տաճկաց սահման,
Թոշում էին կրակի նման:

Մութ անտառից անցնում էին,
Ամէն մէկը առիւծ էին,
Նժոյգ ձիանց վրայ նստած՝
Մերկ սուրերը քաշել էին:

Երբ քաջ Խանը հրահանգ կու տար՝
Արի՛ք առիւծներս իմ քաջ,
Մտան թշնամու խիտ շարքեր,
Կոտորեցին ձախն ու աջ:

Հայաստանի հողին վրայ
Քաջը թափեց իւր արիւնը.
Յիշենք հայեր, չը մոռանանք
Կտրին Խանի սուրբ անունը:

ՍԱՐԴԱՐԱՊԱՏ

Երաժշտ.՝ Է. Յովհաննեսեան

Խոսք՝ Պ. Մելիք

Սրբ չի մը - նում ելք ու - ծար իենթերն են գըտ-
նում հը - նար Այս - պէս ծա - զեց ա- բե - զու - կունց
Սար - դա - բա - պա - տի մար - աը մեծ
Իյու - պէս ծա - զեց ա - բե - զու - կունց
Սար - դա - բա - պա - տի մար - աը մեծ: Զան-
զեր դօ - դան - չէք սըր-բա - զան բային-
ըին կան-չէք այս ար - դար պա - - տից սե-
բունդ-ներ դուք ձեզ նա - նա - չէք Սար- դա--բա - պա - տից:

ՍԱՐԴԱՐԱՊԱՏ

Երբ չի մնում ելք ու ճար,
Խենթերն են գտնում հնար:
Այսպէս ծագեց արեգակեց
Սարդարապատի մարտը մեծ:

Զանգե՞ր, դողանջէք,
Սրբազն քաջերին կանչէք
Այս արդար պատից:
Սերունդե՞ր, դուք ձեզ ճանաչէք
Սարդարապատից:

Աւարայրից ջանք առանք,
Այստեղ մի պահ կանգ առանք,
Ու շունչ առած՝ շունչներս տանք
Սարդարապատի պատի տակ:

Զանգե՞ր, դողանջէք...

Բայց մենք չընկանք, մենք միշտ կանք.
Մենք չհանգանք՝ դեռ կը գանք
Երբ տան զանգը, ահազանգը,
Որ մեր հոգու պարտքը տանք:

Զանգե՞ր, դողանջէք...

ՀԵՐՈՍՆԵՐԻ ԵՐԳԸ

Մայր ծը - նո - ղի պէս ես նա-յում Ա - բարա - տի -
ցը, չա- յաս- աա-նի նո - ղին մեռ-նեմ, սըր- տի խորքի -
ցը - - - - : ցը: Բա - ժակ- նե - րը ե - կէք խըմենը
կե - նաց հա - յե-րին, բա - ժակ- նե - րը հ - լէք իր - մենը
կե - նաց հա- յե - րի - ն Անդ- բա - նի - կին Սե- բոր Փաշին
չայկ Բը - ժը կեան - ցի - - ն: ցին:

ՀԵՐՈՍՆԵՐԻ ԵՐԳԸ

Մայր ծնողի պէս ես նայում Արարատիցը,
Հայաստանի հողին մեռնեմ, սրտի խորքիցը:

Բաժակները եկէք խմենք կենացն Հայերին,
Անդրանիկին, Սերոբ Փաշին, Հայկ Բժշկեանցին:

Այն Հայը որ ազգն ուրանայ եւ այլազգ դառնայ,
Մահուան օրը հայ արցունքին նա չարժանանալ:

Բաժակները եկէք խմենք կենացն Հայերին,
Անդրանիկին, Սերոբ Փաշին, Հայկ Բժշկեանցին:

ՎԱՐԴԱՆ
ԻՄ ՀԱՅՐԵՆԵԱՅ ՀՈԳԻ ՎԱՐԴԱՆ

Ս. Ն. Ֆելիկեան

Իմ հայ - բեն-եաց նո զի - վար - դան նո-զիս նոգւոյն հա-զար
 որ Տըղ - մուտի ա - փե - ըով վաթսուն հա-զար
 եղ - նի դուրպան: Զարկիր զարկւար ին-կար քաջ քաջ
 կըտ - բիննե - ըով:
 պար-սիկ սրփոած մի ձախ մի աջ իմ հայ - բեն - եաց
 = - բեւ վար - դան ա - բեւս ար՝ լուդ եղ - նի դուրպան:

ՎԱՐԴԱՆ
ԻՄ ՀԱՅՐԵՆԵՍԱՑ ՀՈԳԻ ՎԱՐԴԱՆ

Իմ հայրենեաց հոգի Վարդան,
Հոգիս հոգւոյդ եղնի ղուրպան.
Որ Տըղմուտի ափերի քով,
Վաթսուն հազար կտրիծներով
Զարկիր, զարկուար, ինկար քաջ-քաջ,
Պարսիկ սփռած ի ձախող ու յաջ:

Իմ հայրենեաց արեւ, Վարդա՞ն,
Արեւս ար'ուոդ եղնի ղուրպան:
Աւետարանն ու խաչն առիր,
Տարիր յերկինս բարձրացուցիր,
Եւ դուն ալ հետ թողիր գացիր,
Անուշ արեւոդ հողին տըւիր:

ԶԻՆՈՒՈՐԻ ՄՈՐ ԵՐԳԸ

Մշակում՝ Ալ. Մնակեան

Խոսք՝ Պ.Վ. Նաթանեան

The musical score is in G major, 3/4 time. The lyrics are written below the notes:

Զար - թիր որդ - եակ յուշ բեր վեր կաց պա - տե- րազ - մի
 փողն - հըն - չեց չեց զար - թիր զո - չեց ձայն հայ-
 բեն - եաց կե - նաց մա - հու ժամն հըն - չեց չեց :

ԶԻՆՈՒՈՐԻ ՄՕՐ ԵՐԳԸ

Զարթիր որդեակ, յուշ բեր, վեր կաց,
Պատերազմի փողն հնչեց,
Զարթի՛ր գոչեց ձայն հայրենեաց,
Կենաց մահու ժամ հնչեց:

Պատրաստեր եմ քո զէնքերը,
Ահա զլխիդ վերեւ կան՝
Ինչպէս երբեմն քո գրքերը՝
Երբ կ'երթայիր վարժարան:

Ելիր կապեմ սուրը մէջքիդ,
Ասպար կախեմ քո ուսեդ,
Եւ սուրբ դրօշակ հայրենիքիդ
Թող ծածանի աջ թեւէդ:

Փոխան գրքիդ ահա սուսեր,
Փոխան թղթի՛ կոռուի դաշտ.
Գնա՛ մեռիր ազգիդ համար,
Թող մայր երկիրդ ապրի հաշտ:

Քսան տարի կերակրեցի
Մինչ հասակդ այդ առիր.
Այդ հասակիդ մայրդ մեռնի,
Դուն ալ քու ազգիդ մեռիր:

Յառա՛ջ որդեակ, ի մարտ անմահ,
Տուէք անվախ կուրծք, ճակատ,
Հոգ չէ թէ քեզ կը գտնէ մահ,
Զի յայնժամ է ազգն ազատ:

ՀԱՅԱՍՏԱՆ ԱՊՐԻՐ ՅԱՒԻՏԵԱՆ

Երաժշտ.՝ Ե. Յակոբեան

Խոսք՝ Սարմէն

Son է իրն-դու -թիւն չա -յոց աշ - խար-հում բռ- լո -րի սոր-
տու-մ զա - բուն է զա- բուն: Յա-բուն է զարուն չայաս-տան
չա - յաս- տան դու մայր իրն-դու - թեան վառ ա - բե - ւի
տակ ապ - րիր ապ - րիր յա - ւիտ - եան չա - յաս-
ՊԱԼ ՏԵՂՈՅ ԵԻՆԵ
II ապ - րիր յա - ւիտ-եան: ապ - րիր յա- ւիտ - եան :

ՀԱՅԱՍՏԱՆ, ԱՊՐԻՐ ՅԱՒԻՏԵԱՆ

**Տօն է խնդութիւն,
Հայոց աշխարհում,
Բոլորի սրտում
Գարուն է, գարուն:**

Կրկներգ

**Հայաստան, Հայաստան,
Դու մայր խնդութեան,
Վառ արեսի տակ ապրիր,
Ապրիր յափառեան:**

**Մերն է ապագան
Լոյսով մշտական,
Դեռ ինչքան լաւ-լաւ
Օրեր պիտի գան:**

Կրկներգ

**Տօն է խնդութիւն,
Հայոց աշխարհում,
Բոլորի սրտում
Գարուն է, գարուն:**

Կրկներգ

ՍՈՒԼՈՒԽԻ ԿՈՒԻՆԸ

Մշակում՝ Ալ. Մնակեան

The musical score consists of four staves of music in G major, common time. The lyrics are written below each staff. The first staff starts with a dotted half note followed by eighth notes. The second staff begins with a sixteenth note. The third staff starts with a quarter note. The fourth staff starts with a quarter note.

Սուլուխի ա - հա - լո - - - - ր պա - տեց Սը - շոյ
հա - - - շտ նո - րէ - ն հա - ռա - - չե - - ց
հէզ Սուլ - լ - թանն ան - հաշտ նո - րէ - ն հա - ռա - չե - - ց
հէզ Սուլ - լ - - թանն ան - հաշտ:

ՍՈՒԼՈՒԽԻ ԿՌԻՒԾ

Սոսկումն ահաւոր պատեց Մշոյ դաշտ,
Նորէն հառաջեց հեգ Սովթանն անհաշտ,
Սարսափը մեծ էր, վախցաւ թշնամին,
Ղումանտան կանչեց Քէօսա Պինապաշին.
Հասիր բանակովդ ապստամբ Սովուս,
Սկսի կոիւ, բարձրանայ վեր մուխ:

Ազատ որդիներ Գէորգ և Ռուբէն,
Ի՞նչ միջոց պէտք է որ ի գործ դնեն.
Ուզեցին քաշուիլ ի սէր գիւղացւոց.
Պինապաշին կոռույ փողը հնչեցուց.
Տասնեակ զատուելով տղերք դիրք առին,
Աստուած կանչելով կրակ բաց արին:

Կոռուեցէ՛ք տղերք, Գէորգ կը ձայնէր,
Տաքցաւ հրացան, վառեց գնդակներ,
Ի մէջ մեծ յուզման քաջ ֆէտաներին,
Աւրեր էր հրացան Գէորգ Չավուշին,
Երբ ինք անտարբեր հրացան կը քննէր,
Գնդակի կայծ մը ձախ կողմ կը մտնէր:

Զարնուեր էր Գէորգ, սարերի ապան,
Մէկ զէնքին նայեց մէկ ալ իր արեան,
Ուղղեց մօսինը իր նպատակին,
Ունաց վար ինկաւ Քէօսա Պինապաշին,
Երբ ինկած տեղից ուզեց վեր կայնիլ՝
Հասաւ Մքոյից գնդակ մահաբեր:

ԽԱՂԱՂ ԴԱՇՏԻ ՈՐԴԻՔ

Չայնագրում՝ Տ. Զեյթունցեան

Խաղաղ դաշտ - տի որ - դիք, լեռ - նե - րը ել - նենք
 ա - րօր գու - թան մոռ - նանք հը - րա - ցսն ա - նե - նք
 մնշուած մեր բո - ղո - քը յայտնենք զէնքե - րո - վ
 ել մեր ար - դար դա - ար վա - բենք ա - րիւ - նով:
 Մեր կեանք մեր մահ թող լի - նի ա - զա - ա
 մըն շուած հա - յու: որ - դիք հա - րա - զա:

ԽԱՂԱՂ ԴԱՇՏԻ ՈՐԴԻՔ

Խաղաղ դաշտի որդիք, լեռները ելնենք,
Արօր, գութան մոռնանք, հրացան առնենք.
Ծնշուած մեր բողոքը յայտնենք զէնքերով
Եւ մեր արդար դատը վարենք արիւնով:

Մեր կեանք, մեր մալ թող լինի ազատ,
Ծնշուած հայու որդիք հարազատ:

Քան թէ ամէն վայրկեան կենդանի մեռնիլ,
Ազատութեան վճռենք աներկիւղ զոհուիլ.
Փափուկ մահճում հանգիստ կեանքը վայել է:
Ով որ հայրենիքում ազատ ապրում է:

Մեր կեանք, մեր մալ թող լինի ազատ,
Ծնշուած հայու որդիք հարազատ:

Ստրկութեան շղթան խով շառաչում է
Ազատութեան ճնշուած ձայնը կոչում է.
Ազատ լեռներ թող մեզ լինին ապաստան
Եւ ընդարձակ ձորեր՝ ազատ գերեզման:

Մեր կեանք, մեր մալ թող լինի ազատ,
Ծնշուած հայու որդիք հարազատ:

Առաջ գնանք, անվախ զարնենք թշնամին,
Փրկենք հայ գիւղացին հանենք վախուկէն.
Իմաց տանք վատին անխիղճ բռնաւոր,
Ծագեց հայ հրոսակաց համար պայծառ օր:

Մեր կեանք, մեր մալ թող լինի ազատ,
Ծնշուած հայու որդիք հարազատ:

Յրուած խմբեր, Հաճըն, Զէյթուն, Սուկտիա,
Շտապեն միանալ եւ կազմել գունդ հայկեան.
Հայի ազատութեան կանգնել մի դրօշակ,
Կեանքը մահով կապուած կանգնել նրա տակ:

Մեր կեանք, մեր մալ թող լինի ազատ,
Ծնշուած հայու որդիք հարազատ:

ՀԱՅՐԵՆԵԱՅ ՍԻՐՈՅ ՀԱՄԱՐ

ՀԱՅՐԵՆԵԱՅ ՍԻՐՈՅ ՀԱՄԱՐ

Հայրենեաց սիրոյ համար
Խմբեր պատրաստուել են քաջ,
Հրացանները ուսերին,
Փամփուշտները ձախ ու աջ:

Հնազանդ կարգով շարուած,
Խրենք առիւծի պէս քաջ,
Խմբապետը հրահանգ տուեց
Գնալ միշտ յառաջ յառաջ:

Խմբապետը ներուզն էր,
Օգնականը շատ քաջ էր,
Աղճօն առաջ կանգնած էր,
Պատերազմի կը սպասէր:

Ոսկեզօծ բաշլուղներով,
Լազի շորեր թանկագին,
Գընում էին դէպի Սասուն
Օգնելու Անդրանիկին:

Համիտէի ալային
Հրովարտակ բաժնեցին,
Թնդանօթով, զէնքերով
Դէպի Սասուն գնացին:

Հայ քաջերը դիրք մտան,
Թշնամուն պաշարեցին,
«Ամէն կողմից կրակ տուէք,
Կոտորեցէք», — գոռացին:

Եաման եկաւ ջան ֆէտան,
Սարսափ տիրեց բանակին,
Փախչում էին դէպի լեռներ,
Վախկոտները խմբովին:

Խաւարից լոյս ծագեցաւ,
Երեսում էին յոյսեր,
Դաշնակցութեան ցանած սերմեր
Տալիս էին նոր բոյսեր:

Մեր ապագայ սերունդից
Ըսպասում ենք մեծ յոյսեր.
Կ'երգենք միշտ ազատ կրծքից
Խրախուսալից վեհ երգեր:

Դ. ՄԱՍ

**ԱՐԻ ԵՒ ԱՐԵՆՈՒՅՆԵՐՈՒ
ԵՐԳԵՐ**

ԲԱՆԱԿՈՒՄԻ ՔԱՅԼԵՐԳ

The musical score consists of five staves of music in common time (indicated by 'c') and a key signature of one sharp (indicated by '#'). The lyrics are written below each staff in Armenian. The first staff starts with 'Յառ ոռչ Հ. Ս. Ը. Ը. Յ - ի սկս ուս ներ յա-'. The second staff continues with 'ռոջ յառ ոռչ բառ նառ կուլ - մի, հռն կը սպասեն քոյր ու եղբայր'. The third staff begins with 'ներ, յառ ոռչ յառ ոռչ եւ միշտ յառ ոռչ:'. The fourth staff starts with 'բառ նառ կում, զու ես մեր իւ սէս- լը, օն'. The fifth staff concludes with 'բառ նառ կում ինչ առ նուշ անուն:'. The vocal range is mostly in the soprano and alto voices.

ԲԱՆԱԿՈՒՄԻ ՔԱՅԼԵՐԳ

Յառաջ Հ. Մ. Ը. Մ.ի սկառուտներ
Յառաջ, յառաջ բանակումի
Հոն կ'սպասեն քոյր ու եղբայրներ
Յառաջ, յառաջ եւ միշտ յառաջ:

Օ՛ բանակում դու ես մեր իտէալը
Օ՛ բանակում ինչ անուշ անուն:

Հեռու վայրերէ մենք կը հաւաքուինք
Ամառ ձմեռ մենք քուն չունինք
Գիշեր ցերեկ անդուզ կ'աշխատինք
Բանակումի կը պատրաստուինք:

Օ՛ բանակում դու ես մեր իտէալը
Օ՛ բանակում ինչ անուշ անուն:

ՊԱՀԱԿԻՆ ԵՐԳԸ

գի - շեր է ւ - ոին վե - ու չեղալ լու -
 սին վարն ես ուսն - մին վարն ես առանձին կեցեր
 ենք պա - հակ կը հս կենք մի - պակ ան - վախ ու զին

 տակ ան պախ ու զի - տակ :

ՊԱՀԱԿԻՆ ԵՐԳԸ

Գիշեր է լոխն
Վերը ջինջ լուսին
Վարն ես առանձին:
Կեցեր ենք պահակ
Կը հսկենք մինակ
Անվախ ու դիտակ:

Վրաններ դէս դէն
Կարգով շարուած են
Ուր հանդարտօրէն
Արիններ բոլոր
Կը քնանան խոր
Երազով մ'աղուոր:

Զեռքս գաւազան
Դանդաղ ու անձայն
Կ'ընեմ մի շրջան:
Եւ յանկարծ արագ
Սիրտս ուժգին Կ'ընէ թաք-թաք
Կը զարնէ տաք-տաք:

Մառերուն մէջէն
Այլանդակօրէն
Ահա կը վազեն
Շուքեր, գայլ, գազան,
Ցցած սուր ճիրան
Դէահի ինձ կու գան:

Թմբուկը ուժգին
Փողով միասին
Կը գոռայ մէկ դին:
Բրիչ, գաւազան,
Խեղդակապ, չուան
Շուտով կազմ կ'ըլլան:

Օ՛՛ շուտ սրբազան
Պարտականութեան
Ուժով կու տան ձայն
Ընդոստ վեր կ'ելլեն
Արիններն ամէն,
Արագ մին միւսէն:

Ժամ մը անդադար
Դաշտը եւ անտառ
Կը շրջին վեր վար.
Ահա խնդաձայն
Վերջապէս գազան
Բոնած ետ կու գան:

Արարքէս համակ
Հպարտ, գոհունակ
Կը վազեմ արագ.
Ոչ գայլ ոչ գազան:
Վայ իմ ապշութեան:
Քա՛հ-քա՛ն կը խնդան:

ԲԱԺԱՆՄԱՆ ԵՐԳ

Ար-դեօք պէտք է որ բաժ -նու -ինք մեկ - նինք ան-վե - ըա-
 ղարծ Ար-դեօք պէտք է որ հե-ռա-նանք ու ալ զի-րար մոռ-
 նանք: Ցը - ան - սու - թիւն մըն է մի - այն մի-
 այն ցը - տե - սու - թիւն դար - ձեալ ի - րար կը
 հան - դի - պինք եւ կ`եր-զենք մի-ա - ձայն:

ԲԱԺԱՆՄԱՆ ԵՐԳ

Արդեօք պէտք է որ բաժնուինք
Մեկնինք անվերադարձ,
Արդեօք պէտք է որ հեռանանք
Ու ալ զիրար մոռնանք:

Յտեսութիւն մըն է եղբարք
Միայն ցտեսութիւն.
Դարձեալ իրար կը հանդիպինք
Ու կ'երգենք միաձայն:

Կազմենք շղթայ մը աննկուն
Մեր կուռ բազուկներով
Սիրոյ շղթայ մը զօրատր
Անեղծ ու անարատ:

Յտեսութիւն մըն է եղբարք

.....

ԽԱՐՈՒԿԱՀԱՆԴԵՍԻ ՀՐԱՒԷՐ

The musical score consists of three staves of music in common time (indicated by 'C') and a key signature of one flat (indicated by a 'B'). The lyrics are written below the notes in Armenian. The first two staves begin with a treble clef (G-clef), while the third staff begins with an alto clef (C-clef). The lyrics are:

նդ - բայր ս - կա - ռուտ - ներ պատ - րաս - - աղ - ւե -
 ցէք այս օ - ըուտայ խա-ըուտ - կա - հան - դէ - սին ներ-կայ զըտ -
 նը - ւե - - - լու - - - օն ա - մա պա-րե - ցէք - -

Թառ

Պարսկական ծագումով շատ ընդհանրացած ժողովրդական նուագարան: Թառը ունի մետաղեայ 6-8 լարեր: Կ'օգտագործուի որպէս մենակատարման գործիք ինչպէս նաև երաժշտական խմբաւորումներով կատարողութեան լնքացքին:

ԽԱՐՈՒԿԱՀԱՆԴԵՍԻ ՀՐԱՒԵՐ

**Եղբայր սկաուտներ * պատրաստուեցէ՛ք
Այս օրուայ խարուկահանդէսին
Ներկայ գտնուելու:**

**Օ՛Շ աճապարեցէ՛ք
Իմ եղբայր սկաուտներ
Այս խորհրդաւոր պահուն
Զեր մատադ սրտերը բոցավառելու:**

* Կամ Գայլիկներ

ՖԱՐԻՍ. — ՖԱՐԻՍ.

A musical score for the song "ՖԱՐԻՍ. — ՖԱՐԻՍ." (Faris-Fariss). The score consists of five staves of music in common time (indicated by '3/4' at the top of each staff) and treble clef. The lyrics are written below the notes in Armenian. The lyrics are as follows:

Վեն չո Սո Ըստ ի ա-րի -սեր ֆա-րիա ֆա-րիա
 նա-րոյ-կին շուրջ շը-շան կա-զ լեր ֆա-րիա ֆա-րիա
 ու-րախ զը-ւարթ միշտ կ'եր-գենք բա-ցօ թեայ կեանք
 կը վա-րենք ֆա-րիա ֆա-րիա ֆա-րիա ֆա-րիա
 ֆա-րիա ֆա-րիա ֆա-րիա ֆա-րիա ֆա-րիա ֆա-րիա հօ :

ՖԱՐԻՍ. — ՖԱՐԻՍ.

Վեհ Հ.Մ.Ը.Մ.ի արիներ [կամ գայլիկներ եւ արծուիկներ]
Ֆարիա, ֆարիա, հօ՛,
Խարոյկին շուրջ շրջան կազմեր,
Ֆարիա, ֆարիա, հօ՛,
Ուրախ, զուարթ միշտ կ'երգենք,
Բացօթեալ կեանք կը վարենք:
Կրկնել.- Ֆարիա, ֆարիա, ֆարիա, ֆարիա,
 Ֆարիա, ֆարիա, ֆարիա, հօ՛:

Մենք բնութեան շէն զաւակներ,
Ֆարիա, ֆարիա, հօ՛,
Ապագայի յաղթ սերունդներ,
Ֆարիա, ֆարիա, հօ,
Հայ առողջ պատաճիներ [կամ քոյրեր],
Սիրեցէք իտէալը մեր:
Կրկնել.- Ֆարիա, ֆարիա, ֆարիա, ֆարիա,
 Ֆարիա, ֆարիա, ֆարիա, հօ՛:

Խարոյկը որ կը ճարճատի,
Ֆարիա, ֆարիա, հօ՛,
Մեր սրտերը բոցավառի,
Ֆարիա, ֆարիա, հօ՛,
Ուրախ զուարթ միշտ կ'երգենք,
Բացօթեալ կեանք կը վարենք:
Կրկնել.- Ֆարիա, ֆարիա, ֆարիա, ֆարիա,
 Ֆարիա, ֆարիա, ֆարիա, հօ՛:

ԽԱՐՈՒԿԱՀԱՆԴԵՍԻ ԵՐԳ

Խուզ հա - ւա - քուած խ - ըոյ կին շուրջ կ'ըս պա - սէք մ -
նա - կըն կալ լուրջ ձա հա հա հա - նե - լի - է
խա - ըոյ կա - հան - դէ - սը :

ԽԱՐՈՒԿԱՀԱՆԴԵՍԻ ԵՐԳ

Դուք հաւաքուած խարոյկին շուրջ,
Կը սպասէք անակնկալ լուրջ:

**Ծափերով.- Հա հա հա հաճելի է
Խարուկահանդէսը: (կրկնել)**

Քով-քովի շրջանակ կազմած,
Դէմքերնիդ խարոյկին յառած:
Հա հա հա հաճելի է...

Եղբայրներ պատրաստուեցէք,
Որ ձեր կարգին ուրախացնէք:
Հա հա հա հաճելի է...

Աջէն ձախէն ոտքի չելլեն,
Զուարճալիքներու ատեն:
Հա հա հա հաճելի է...

Վեհ Հ.Մ.Ը.Մ.ի դրօշին շուրջ,
Միշտ եղէք ուրախ աշալուրջ:
Հա հա հա հաճելի է...

Ահա խարոյկը կը մարի,
Զեզ կը մաղթեմ գիշեր բարի:
Հա հա հա հաճելի է...

ԽՈՍՏԱՅԱՅ

Musical notation for the song 'ԽՈՍՏԱՅԱՅ'. The music is in 4/4 time, key signature is B-flat major (two flats). The lyrics are written below the notes.

Խոստայայ պատուին վը- լայ, յար- գել իրդ- ծին
պատուի- լան. ըլ- լու հա- ծոյ Աս- առւ - ծոյ :

ԽՈՍՏԱՑԱՅ

Խոստացայ
Պատույս վըրայ,
Յարգել խընծին պատուիրան
Ըլլալ հաճոյ
Աստուծոյ:

Խոստացայ
Պատույս վըրայ,
Սիրել ընկերս և գործել
Բարիք մը նոր
Ամէն օր:

Խոստացայ
Պատույս վըրայ,
Հայրենիքիս դըրօշին
Արիւնն անգին:
Իմ կեանքին:

Խոստացայ
Պատույս վըրայ,
Շահիլ բարի ընթացքով՝
Վըստահութիւնն
Ամենուն:

Խոստացայ
Պատույս վըրայ,
Հայ ասպետի մ'ունենալ
Հոգին բարի
Սիրտն արի:

ԼՈՒՍՆԻ ԼՈՅՈՎ

A musical score for a vocal piece. The music is written in four staves of G clef, common time (indicated by '2'). The lyrics are in Armenian, written below each staff.

1st staff: Հա-կա-ռւա ենք քնութեան զա-ւակ կը սի-րենք բաց
օ-դը ան-յագ. կը պը-տը-տինք անտառ ձոր լեռ ու կը սորվինք

2nd staff: շատ լաւ բա-ներ հողն է մե-րին ան-կո-ղին տաք

3rd staff: ու քա-ը քա քարձ լուսին վերմակ աստղերուն տակջինջ աստղերուն

4th staff: անուշ անուշ կելլավիք մենք քուն:

ԼՈՒՍՆԻ ԼՈՅՍՈՎ

Սկառուտ ենք բնութեան զաւակ,
Կը սիրենք բաց օդը անյագ.
Կը պտղտինք անտառ, ձոր, լեռ,
Ու կը սորվինք շատ լաւ բաներ:

Հողն է մերին անկողին տաք,
Ու քարը բարձ՝ լուսինն վերմակ.
Աչքերուն տակ ջինջ աստղերուն,
Անուշ, անուշ կ'ըլլանք մենք քուն:

Մենք կը սիրենք մարգը դալար,
Գըլգըլացող աղբիրը սառ.
Հովիկն անուշ անտառներուն,
Գագարները ցից ժայռերուն:

Ուրախութեան դադար չենք տար,
Լուսնի լուսով կը բըռնենք պար.
Մեր ծիծաղէն ու ծափերէն,
Լեռներ, ձորեր ծափ կը զարնեն:

ՓՈՂ ՈՒ ԹՄԲՈՒԿ

The musical score consists of eight staves of music in common time (indicated by 'c') and treble clef. The lyrics are written below each staff in Armenian. The lyrics are:

Փող եւ թրմ- բուկ բոն-քիւն դա-փով ներ-դաշնակ շարք հա-
 մա - չա - փով խո-րոխտ քայլ-երգ լի - ա-հա-գագ սըրտէ, ի սիրու տան
 ար-ձա- զանք ա - րի - նե - բուն հուռունե - րէն թող սերմա -
 նուին իղծերն հա - յուն ա-րի- նե - բուն հուռու - նե -
 րէն թող սերմա- նուին իղծերն հա - յուն ա - րինե -
 բուն փառք ան-նր - ւամ - նայ - րե - նի - բին կա - մա- րին
 տակ մեր եր - կըն - բին զուլալ ա - կե - ր հոն կար-կա-
 չեն ծի - ծեռ-նակ - ներ մեզ կր կան - չեն:

ՓՈՂ ԵՒ ԹՄԲՈՒԿ

Փող եւ թմբուկ, բոնքիւն-դաբով,
Ներդաշնակ շարք, համաչափով,
Խըրոխտ քայլերգ լիահագագ,
Սըրտէ ի սիրտ տան արձագանգ.

Ա.րիներուն
Հուռոաներէն՝
Թող սերմանուին
Իղձերն Հայուն:

Փառքն աննուած Հայրենիքին,
Կամարին տակ մեր երկընքին,
Զուզալ ակեր հոն կարկաչեն,
Ծիծեռնակներ մե՛զ կը կանչեն.

Ա.րիներուն
Հուռոաներէն՝
Թող դալարին
Իղձերն Հայուն:

ԿԻՆ ԿԵՆ ԿՕՆ

Կին կեն կօն կօ - լի կօլ մաջ կայ, կին կեն կօն,
 կին կեն կօն կին կեն կօն կօ - լի կօլ մաջ կայ
 կին կեն կին կեն կօն հէյ լա հէյ լա զամ-պա հէյ լա
 զամ պա հէյ լա հօ օ հէյ լա հէյ լա զամ պա հէյ լա
 զամ պա հէյ լա հօ:

ԿԻՆ ԿԵՆ ԿՕՆ

Կին կեն կօն, կօլի կօլ մաջ կայ,
Կին կեն կօն, կին կեն կօն,
Կին կեն կօն, կօլի կօլ մաջ կայ,
Կին կեն կօն, կին կեն կօն:

Հեյ լա հեյ լա զամպա
Հեյ լա զամպա հեյ լա հօ,
Հեյ լա հեյ լա զամպա
Հեյ լա զամպա հեյ լա հօ (կրկնել):

ՔԱՅԼԵՐԳ՝

Հ.Մ.Ը.Մ.ի ՀԱՄԱԳԱՂՈՒԹԱՅԻՆ Ա. ԲԱՆԱԿՈՒՄԻՆ

Խօսք եւ Երաժշտ։՝ Գ. Գիգիրեան

Աթենք 1978

Ա - բե - ւել - քէն մին - չեւ ա - բեւ մուտք հիւ - սի - սէն հա -

բաւ ե - կանք. բո - լո - ըզս այս վայ - ըին մէջ ճանչ - նա - լու ի -

բար ճանչ - նա - լու ի - բա - ր ու եղ - բայ - բա - նալ

ճամ - պո - րին ճամ - պո - րին մեզ ա - ռիթ ճամ - պո - րին ճամ - պո - րին

ըլ - լա - յ Հ. Մ. Ը. Ա. Մ - ի հայ ա - րի - ներ

մը - նա - լու միշտ եղ - բայր :

ՔԱՅԼԵՐԳ՝
Հ.Մ.Ը.Ը.Ի ՀԱՄԱԳԱՂՈՒԹԱՅԻՆ Ա. ԲԱՆԱԿՈՒՄԻՆ

Արեւելքէն մինչեւ արեւմուտք, հիւսիսէն հարաւ
եկանք բոլորս այս վայրին մէջ ճանչնալու իրար
ճանչնալու իրար ու եղբայրանալ:
Ծամպորին ճամպորին մեզ առիթ՝
ճամպորին ճամպորին ըլլայ
Հ.Մ.Ը.Ը.Ի սկաուտներ
մնալու միշտ եղբայր:

Ամուր պահենք միշտ մեր կապերը աշխարհի վրայ
գուրգուրալով մեր սիրուն լեզուին ու խոստանալով
խոստանալ միշտ հայ մնալ:
Ճամպորին ճամպորին մեզ առիթ (կրկնութիւն):

ՔԱՅԼԵՐԳ՝ ՀԱՅ ԱՐԻՆԵՐՈՒ

Խօսք և Երաժշտ.՝ Գ. Կառվարենց

The musical score consists of six staves of music in common time (indicated by 'C') and a key signature of one flat (indicated by 'F'). The vocal range is primarily in the soprano and alto voices. The lyrics are written below each staff, corresponding to the musical notes. The text is in Armenian, with some words in English or Latin capital letters.

Փող ու ծո - կան դրօշ ու թմ-բուկ ա - րեւ-աթիր ու ոազմա-քայլ
 սէզ ու գըւարթ պիրկ ու ծա-պուկ աղուէս ու քու աղուէս ու գայլ
 որք կո-րիւն-ներ սար ու քա- րի մեզ ա - ւազ-ներ ե-ղան օրրան
 ծո-վերն արեան հայ աշխարհին մը-կըրտութեան ա- ւա զան իի զախ ու
 քաջ մէկ ձախ մէկ աջ քար - ձրա - ծա -
 կատ ու հո - յա - լանչ միշտ ան' - նը
 ւաճ քա - լենք յա - ոաջ ան - շեղ յա -
 ոաջ հո - զե - զը - ւարժ ւարժ:

ՔԱՅԼԵՐԳ՝ ՀԱՅ ԱՐԻՆԵՐՈՒ

Փող ու ճոկան, դրօշ ու թմբուկ
Արեւաբիթ ու ուազմաքայլ,
Սէգ ու զուարթ, պիրկ ու ճապուկ,
Աղուէս ու վագր, արծիւ ու գայլ:
Որբ կորիւններ քար ու սարի
Մեզ աւազներն եղան օրրան,
Ծովերն արեան հայաշխարհի՝
Մկրտութեան աւազան:

Կրկ. Խիզախ ու քաջ, մէկ ձախ մէկ աջ,
Բարձրաճակատ ու հոյալանջ,
Միշտ աննուած քալենք յառաջ
Անշեղ յառա՛ջ, հոգեզուարճ:

Շիգ ու ձգտում, պողպատէ՛ կամք,
Անխոցելի եւ անկաշկանդ,
Մէ՛կ ճանապարհ, մէ՛կ հաւատամք,
Մինչեւ կատարն հայրենաւանդ:
Ոչ մէկ օտար շեշտ ու նուազ
Ոգեւորէ թող մեր հոգին,
Միայն երկո՛նքն Անկախութեան
Հայրենիքին, Հայ հողին:

Խիզախ ու քաջ, եւլն.

Վաղն երբ ծագի թուխաբէն արեւ,
Կեանքն՝ անստուն՛ր դառնայ Հայուն,
Մեր ծիծաղկոտ հողին վերեւ
Երբ ծածանի դրօշն Եռագոյն,
Մէկն հազարով հատուցանել
Թող ըլլայ մեր պարտքը զուարթ,
Սէր, աշխատանք, բարիք ցանել՝
Որ սրտէ սիրտ բացուի վարդ:

Խիզախ ու քաջ,.. եւլն.

Ո՞Վ ԿՐՆԱՅ

Ով կը ը-նայ ա -ռա ռաս-տա ռա-նաւ մը վա րել ա-ռանց հո-
վի ռւ իր ըն - կե - ըէն բաժ-նը ւիլ ա -ռանց ար ցուն-քի:

Քամանչա

Կաշիով պատուած փայտէ մարմինով եւ 4 լարերով
գործիք մըն է քամանչան: Կը նուազուի ծունկի վրայ հանգ-
չեցւած ուղղահայեաց դիրքով եւ յատուկ աղեղով: Քամնա-
չայի ձայնը շատ նուրբ տխրամած ու սրտառուչ է: Այս նուա-
զարանը յատկապէս կը յարմարի աշուղական երգերու ընկե-
րակցութեան եւ կը գործածուի գրեթէ միշտ առաջին կատա-
րողութեան համար:

Ո՞Վ ԿՐՆԱՅ

Ով կրնայ առագաստանաւ մը վարել առանց հովի
Ու իր ընկերէն բաժնուիլ առանց արցունքի
Ես կրնամ առագաստանաւ մը վարել առանց հովի
Բայց ոչ ընկերէս բաժնուիլ առանց արցունքի:

ԶՄԲՈ ԶՄԲՈ

A musical score for 'ZMBOM' featuring four staves of music. The first staff uses a treble clef, the second a bass clef, the third a tenor clef, and the fourth a bass clef. The time signature is 2/4 throughout. The lyrics are written below each staff:

Ճըմ - քօ ճըմ-քօ ճըմ-քօ քօ քօ մարշ մարշ քմյ + լով մարշ
յա - ռաջ կ` երթանք քայ-լով մարշ ճըմ-քօ ճըմ-քօ ճըմ-քօ քօ
մէկ եր - կու մէկ եր - կու մէկ եր - կու մէկ եր - կու
յա - ռաջ կ` երթանք ան - եր - կիւղ թրա լա լա լա թրա լա լա

ԶՄԲՈ ԶՄԲՈ

Զմբօ ձմբօ ձմբօ թօ, թօ.

Մարշ մարշ քայլով մարշ.

Յառաջ կ'երթանք քայլով մարշ (կրկնել):

Զմբօ ձմբօ ձմբօ թօ:

Մէկ երկու, մէկ երկու,

Մէկ երկու, մէկ երկու,

Յառաջ կ'երթանք աներկիւդ

Թրալա լա լա թրալա լա լա:

ՄԵՐ ԽՈՀԱՐՄԱՐԸ

The musical score consists of six staves of music in common time (indicated by '2 4'). The lyrics are written below each staff in Armenian. The music features a mix of eighth and sixteenth notes, with some rests and dynamic markings like 'f' (fortissimo) and 'p' (pianissimo). The lyrics describe the beauty and strength of Armenia, mentioning its mountains, rivers, and people.

Խո - հա - րար մէր արազ ան-նը - մա - ն
 ձէ - թով կ`օ - ծէր գըլուռի ու վը - րան. գըր-պա - նին
 մէջ կը խոռ - նուէ - ին հաւ - կիթ - նե - - րո
 աղ պըղպե - ղին կոկիկ ծարպիկ խո-հա - րար մէր
 մեծ պար - ծան-քը խո-յե - րուն ծեր զի - տէր ե - փել
 ա - նուշ հա - մեղ կե-րակուր - ներ ան - աղ ան - եղ:

ՄԵՐ ԽՈՀԱՐՄՈՅ

1. Խոհարար մ'եր արագ աննման
Զէթով կ'օծէր գլուխն ու վըրան.
Գըրպանին մէջ կը խառնուէին
Հաւկիթները, աղ, պղպեղին:

Կրկներգ

Կոկիկ, ճարպիկ խոհարար մ'եր
Մեծ պարձանքը «խոյերուն»⁽¹⁾ ծեր
Գիտէր եփել անուշ համեղ
Կերակուրներ անաղ, անեղ:

2. Նորութեան շատ էր սիրահար
Եղինձ շինէր ապուր կ'ըլլար
Ոսպապուրին ջուրը եթէ
Թափես, կ'ըսէր կ'ըլլայ քէօֆտէ:
3. Երբոր եփէր կաթով ապուր
Կ'խառնէր բրինձին աղ ու ցաւար
Եւ վրան կը դնէր անպատճառ գէթ
Քանի մը մեծ դգալ այրած ձէր:
4. Ոչ ագահ էր ոչ շատակեր
Բայց երբ ութեակն ուտել չ'ուզեր
Բնաւ չէր մոռնար ընել բէն գիմ
Ինքն ուտելով անոնց բաժին:

(1) «Խոյ»ի տեղ կրնան դրուիլ ուրիշ անուններ ալ, օրինակ ձի....:

ՀԻՐՈՇԻՄԱ.

The musical score consists of four staves of music in common time (indicated by '4') and A major (indicated by a single sharp sign). The lyrics are written below each staff in Armenian. The lyrics are:

Կէ - լի կէ - լի կէ - լի նա - կա - զա - ըի չի - թո - շի - մա
 պօմ, պօմ, պօմ, կէ - լի կէ - լի կէ - լի նա - կա - զա - ըի
 շի - թո - շի - մա պօմ չո չի - թո նի - թօ կէ - լի կէ - լի պօմ:

ՀԻՐՈՇԻՄԱ.

ԿԵԼԻ ԿԵԼԻ ԿԵԼԻ Նակազաքի
Հիրօշիմա պօ'մ, պօ'մ, պօ'մ
ԿԵԼԻ ԿԵԼԻ ԿԵԼԻ Նակազաքի
Հիրօշիմա պօմ...
Հօ հիրօ հիրօ կելի կելի պօմ, պօմ, պօմ,
Հօ հիրօ հիրօ կելի կելի պօմ:

Ե. ՄԱՍ

**ԳԱՅԼԻԿ ԵՒ ԱՐԾՈՒԻԿՆԵՐՈՒ
ԵՐԳԵՐ**

ԳԱՅԼԻԿ ԸԼԼԱԼ ԳԱՅԼԻԿ...

The musical score consists of five staves of music in common time, key signature of one sharp, and soprano vocal range. The lyrics are written below each staff.

1st staff: գայ- լիկ ըլ- լալ գայ- լիկ աս- կից աղ- ւոր ինչ կայ,

2nd staff: գայ- լիկ ըլ- լալ գայ- լիկ աս- կից աղ- ւոր բան չո-կայ գայ-

3rd staff: լիկ գայ- լիկ աս- կից աղ- ւոր բան չո- կայ գայ-

4th staff: լիկ գայ- լիկ աս- կից աղ- ւոր բան չո- կայ

5th staff: գայ- լի-կը մեծ գայ լը մը- տիկ կ` ընէ բայց գայ լիկը ինք զինքը մը-
տիկ չ` ը - նէր:

ԳԱՅԼԻԿ ԸԼԼԱԼ ԳԱՅԼԻԿ...

**Գայլիկ ըլլալ գայլիկ,
Ասկէ աղուոր ի՞նչ կայ:
Գայլիկ ըլլալ գայլիկ,
Ասկէ աղուոր բան չըկայ:
Գայլիկ, գայլիկ ասկէ աղուոր ի՞նչ կայ.
